

# Պատվաստներ

Եղանակային Գրիպ եւ H1N1 Համաճարակային Գրիպ (Խոզագրիպ)

	Եղանակային Գիիժ	H1N1 Համաճահակային Գիիժ
<b>Ի՞նչ է դա</b>	Շնչային վարակ, որի պատճառը գրիպի մանրէներն են: Եղանակային գրիպի մանրէները փոխվում են ամեն տարի, որի հետեւանքով եղանակային գրիպի պատվաստը նորոգվում է՝ պաշտպանվելու համար եղանակային գրիպի այժմյան մանրէների դեմ:	Շնչային վարակ, որի պատճառը գրիպի մի նոր մանրէն է: Նրա հետեւանքով տեղի ունեցել են մեծ բռնկումներ աշխարհի զանազան վայրերում: Մարդկանց մեծ մասը դիմադրողակաճություն չունի, որովհետեւ գրիպի նոր տեսականի է:
<b>Ո՞վ պետք է ընդունի պատվաստը</b>	<p>Ով որ ուզում է խուսափել գրիպից պետք է ընդունի եղանակային գրիպի պատվաստ, հատկապէս</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հղի կանայք</li> <li>• Երեխաներ՝ 6 օրաց մինչեւ 18 տարեկան</li> <li>• Նրանք ովքեր ապրում են կամ խնամում այնպիսի մարդկանց, որոնք վտանգված են գրիպի բարդություններից, ներառյալ մինչեւ 5 տարեկան երեխաներ եւ 50 տարեկան կամ ավելի չափահասներ</li> <li>• 50 տարեկան կամ ավելի մարդիկ</li> <li>• Մարդիկ, որոնք խրոնիկական հիվանդություններ ունեն, ինչպէս ասթմա կամ շաքարախտ, տկարացած իմունային համակարգեր, կամ որոշ առողջական խանգարումներ, որոնք ստեղծում են կուլ տալու խնդիրներ</li> <li>• Բուժաշխատողներ</li> <li>• Մարդիկ, որոնք ապրում են ծերանոցում կամ երկարատեւ խնամքի այլ տեղերում</li> </ul>	<p>H1N1 պատվաստը առաջին հերթին առկա կլինի</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հղի կանանց</li> <li>• Մարդկանց, որոնք ապրում կամ խնամում են մինչեւ 6 ամսական երեխաների</li> <li>• Բուժաշխատողներ</li> <li>• Շտապօգնության բժշկական անձնակազմի</li> <li>• Երեխաների ու երիտասարդների՝ 6 ամսից մինչեւ 24 տարեկան</li> <li>• Մարդկանց, որոնք 25ից մինչեւ 64 տարեկան են եւ ունեն խրոնիկական հիվանդություններ, ինչպէս ասթմա, շաքարախտ կամ տկարացած իմունային համակարգեր</li> </ul>
	<p><b>Ձեզանից չի պահանջվում, որ ընդունեք որեւէ պատվաստ, բայց պատվաստները լավագույն ձեւն են ԳԳրիպի երկու տեսակները կանխելու համար:</b></p> <p>Այն խմբերը, որոնց հանձնարարվում է ընդունել պատվաստը, ընտրվել են որովհետեւ դրանք ավելի հավանաբար կարող են</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գրիպից վարակվել</li> <li>• Գրիպը տարածել</li> <li>• Ենթարկվել առողջական ավելի լուրջ խնդիրների՝ վարակվելու դեպքում</li> </ul>	
<b>Ե՞րբ պետք է ընդունեն պատվաստը</b>	<p>ուք պետք է ընդունեք եղանակային գրիպի պատվաստ ամեն տարում՝ գրիպի եղանակի ժամանակ (սովորաբար սեպտեմբերից մինչեւ նայիս):</p>	<p>Դուք հավանաբար կարող եք ընդունել H1N1 համաճարակային գրիպի պատվաստ հոկտեմբերի 2009ից:</p>



	Եղանակային Գիիժ	H1N1 Համաճահակային Գիիժ
<b>Քանի՞ դեղաքանակի կարիքն ունեն</b>	<ul style="list-style-type: none"> <li>Շատ մարդիկ միայն կարիքն ունեն եղանակային գրիպի պատվաստի 1 դեղաքանակի:</li> <li>Մինչև 9 տարեկան այն երեխաները, որոնք առաջին անգամ են ընդունում պատվաստը, կարիքն ունեն 2 դեղաքանակի:</li> </ul>	<p>Չափահասների մեծ մասը հավանաբար միայն կարիքը կունենան H1N1 համաճարակային գրիպի պատվաստի 1 դեղաքանակի:</p> <p>Երեխաները հավանաբար կարիքը կունենան 2 դեղաքանակի:</p>
<b>Որքա՞ն ապահով են պատվաստները</b>	<p>Եղանակային գրիպի պատվաստները շատ ապահով են: Նրանք տրվել են միլիոնավոր մարդկանց եւ նրանց ապահով լինելը փաստված իրողություն է:</p>	<p>Վերջերս ավարտված բժշկական ուսումնասիրությունների արդյունքները նշում են, որ պատվաստը ապահով է եւ կողմնակի հետեւանքներ չունի: Այս պատվաստի պատրաստության ու փորձարկման գործընթացը նման լինելով եղանակային գրիպի պատվաստի ստեղծման գործընթացին, մասնագետները վստահ են, որ H1N1 համաճարակային գրիպի պատվաստը կլինի ապահով ու արդյունավետ:</p>
<b>Պատվաստները ինձ գրիպ կպատճառե՞ն?</b>	<p>Ոչ, պատվաստը գրիպ չի պատճառում: Մի քանի պատճառներ կան, որոնք կարող են առաջացնել •րիպանման ախտանիշներ՝ պատվաստ ընդունելուց հետո.</p> <ul style="list-style-type: none"> <li>Գրիպի պատվաստները պատճառում են չափավոր կողմնակի հետեւանքներ, ինչպես ջերմություն: Սակայն, սրանք երկարատեւ չեն եւ գրիպից նվազ լուրջ են:</li> <li>Գրիպի պատվաստները պատճառում են չափավոր կողմնակի հետեւանքներ, ինչպես ջերմություն: Սակայն, սրանք երկարատեւ չեն եւ գրիպից նվազ լուրջ են:</li> <li>Դուք կարող եք վարակված լինել Ձեր ընդունած պատվաստից տարբեր տեսակի •րիպով:</li> </ul>	
<b>Որտե՞ղ կարող եմ ընդունել պատվաստը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Մասնավոր կետերում, ինչպես բժշկական գրասենյակներ եւ կլինիկաներ</li> <li>Վաճառման կետերում, ինչպես դեղատոմսեր</li> <li>Հանրային առողջապահությունից կազմակերպված պատվաստի կլինիկաներում, որոնք նախատեսված են այն հաճախորդների համար, որոնք ապահովագրություն չունեն</li> </ul> <p>Եթե դուք չունեք կանոնավոր բուժապասարկող, զանգահարեք Լոս Անջելեսի շրջանի տեղեկատվական համարով՝ 2-1-1, կամ այցելեք <a href="http://www.publichealth.lacounty.gov">www.publichealth.lacounty.gov</a> անվճար կամ ցած վճարով իմունիզացիայի մատակարարների ցուցակի համար:</p>	
<b>Ուրիշ ի՞նչ կարող եմ անել ինձ պաշտպանելու համար</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ծածկեք ձեր քիթն ու բերանը անձեռոցիկով կամ թելով երբ հագում եք կամ փռշտում:</li> <li>Հաճախ լվացրեք ձեռները օճառով ու ջրով եւ/կամ •ործածեք մաքրող ժելեր:</li> <li>Խուսափեք դպչելուց ձեր աչքերը, քիթը կամ բերանը, քանի մանրէները տարածվում են այդ ճանապարհներով:</li> <li>Խուսափեք մոտիկ շփումից հիվանդ մարդկանց հետ:</li> <li>Եթե հիվանդ եք, մնացեք տանը առնվազն 24 ժամ ջերմի ավարտից հետո:</li> </ul>	

**Լրացուցիչ տեղեկությունների համար**

Հիվանդության վերահսկողության եւ կանխարգիլման կենտրոններ (CDC)  
 (800) CDC-INFO կամ (800) 232-4636  
[www.cdc.gov/h1n1flu](http://www.cdc.gov/h1n1flu)

Կալիֆոռնիայի հանրային առողջապահության բաժանմունք (888) 865-0564  
[www.cdph.ca.gov](http://www.cdph.ca.gov)

Լոս Անջելեսի շրջանի հանրային առողջապահության բաժանմունք  
 Բուժապասարկման ծառայություններ: Չանգահարեք **2-1-1**  
[www.publichealth.lacounty.gov/H1N1](http://www.publichealth.lacounty.gov/H1N1)  
**DPH Update Listserv**© Էլ-փոստ գրեք [Listserv@listserv.ph.lacounty.gov](mailto:Listserv@listserv.ph.lacounty.gov)  
 հասցեին Գրեք "subscribe DPHUPDATE first name last name" Ա»մայի տողում  
 եւ Էլ-փոստի տեքստում